

«Մխիթար Սեբաստացի» կրթահամալիրի խաղարակային դատարանին

9-րդ դասարանի սովորող Տիգրան Աբրահամյանի հայցի պատասխան

Հարգելի դատարան, ներկայացնում եմ «Մխիթար Սեբաստացի» կրթահամալիրի 9-րդ դասարանի սովորող Տիգրան Աբրահամյանի [հայցի](#) պատասխանը ավագ դպրոց վարժարանի մասով:

Հարգելի դատարան, ցանկանում եմ հիշեցնել, որ մենք սովորում և աշխատում ենք ՀՀ ԿԳ նախարարության «Երևանի «Մխիթար Սեբաստացի» կրթահամալիր» ՊՈԱԿ-ում (այսուհետև՝ կրթահամալիր): Կրթահամալիրը իրականացնում է հեղինակային կրթական ծրագիր, ինչը որոշված է հանրակրթության մասին ՀՀ օրենքով.

այլընտրանքային կրթական ծրագիր՝ առարկայական ծրագրերի, ուսումնական պլանների, ուսուցման կազմակերպման ձևերի, միջոցների և մեթոդների բազմազանությունն առաջարկող կրթական ծրագիր, որն ապահովում է հանրակրթության պետական չափորոշիչով սահմանված արդյունքները.

հեղինակային կրթական ծրագիր՝ այլընտրանքային կրթական ծրագրի տեսակ, որը միջազգային չափանիշներով ճանաչված (վկայագրված) է որպես հեղինակային կամ ստեղծված, մշակված և ներդրված է մանկավարժական որոշակի համակարգի կամ կառավարման մարմնի (մարմինների) կողմից,» (ՀՀ օրենքը հանրակրթության մասին, հոդված 3, կետ 6բ):

Ուսումնական գործունեությունը տարեկան երկու անգամ ճամբարների տեսքով կազմակերպելը բնորոշ է մեր կրթահամալիրին: Հանրապետության ուրիշ որևէ դպրոցում ուսումնական գործունեության կազմակերպման նման ձև ինձ հայտնի չէ:

Վարժարանում ուսումնական գործունեությունը կազմակերպվում է վարժարանի՝ կրթահամալիրի ուսումնական [օրացույցի](#) հիման վրա կամված, ուսումնական օրացույցով: Այդ օրացույցով որոշված են նաև ամառային և ձմեռային ճամբարները: Դրանք չեն կազմակերպվում սովորողների արձակուրդների հաշվին: Կրթահամալիրում ուսումնական տարին երկու կիսամյակ ունի՝ առաջին կիսամյակ՝ սեպտեմբերից մինչև հունվարի վերջը և երկրորդ կիսամյակ՝ փետրվարից մինչև հունիսիս վերջը: Ճամբարային գործունեությունը պարտադիր է բոլոր սովորողների համար, ինչը ամրագրված է նրանց անհատական ուսումնական պլաններում. « Ուսումնական տարին կազմակերպվում է կրթահամալիրի տարեկան ուսումնական օրացույցով: Դրանով որոշված ճամբարների, ուսումնական ստուգատեսների, ծեսերի և տոների սահմանված կարգով մասնակցությունը պարտադիր ուսումնական աշխատանք է:» (Ուսումնական պլանի [պարզաբանում](#) կետ 6), ինչպես նաև սովորողի ուսումնառության պայմանագրում. «սովորողը պարտավոր է սահմանված կարգով մասնակցել Կրթահամալիրի ուսումնական օրացույցով որոշված ճամբարներին, ստուգատեսներին, ծեսերին, տոներին» (սովորողի ուսումնառության պայմանագիր, 4-րդ բաժին, 5-րդ կետ, 7-րդ ենթակետ):

Ճամբարային գործունեությունը ամեն կիսամյակի համար մշակվում է՝ հաշվի առնելով նախորդ տարիների փորձը և նոր ծագած խնդիրները: Անցած ուսումնական տարվա վարժարանային ձևաչափի ճամբարը կազմակերպելիս բովանդակության մեջ ընդգրկել էինք սովորողի ընտրությամբ դասընթացները, ակումբային գործունեությունը, պար, մարզական պարապմունքներ, ճամփորդություններ: Քանի, որ հայցվորը հղում է արել ամառային ճամբարին, ես կներկայացնեմ 2014թ. վարժարանի ամառային ճամբարը: Այդ ճամբարը կազմակերպել ենք ըստ ակումբների.

Ամառային [ուսումնական ճամբար](#)

Ամառային ուսումնահետազոտական ճամբարի օրակարգ.

Ժամը	աշխատանք
09:00 - 09:30	Առավոտյան ընդհանուր պարապմունք
09:30-11:00	Էկոլոգիական նախագծեր, շրջական միջավայրի բարելավում
11:00-12:30	Անհատական եւ խմբային աշխատանքներ
12:30-13:00	Ընդմիջում
13:00-14:00	Պարի / երգի / մարզական միջոցառումներ / բացօթյա ընթերցասրահ / երգչախումբ
14:00 - 15:00	Ամառային ճամբարային նախագծեր. Նախապատրաստում ամառային ստուգատես - փառատոններին

Ծրագիր՝

1. Ուսումնահետազոտական աշխատանքներ

- Ուսումնահետազոտական նախագծեր
- Սովորողների անհատական ուսումնական պլանի կազմում, քննարկում:
- Նախագծային ուսուցման արդյունքների ներկայացում եւ ամփոփում, առկա խնդիրների վերհանում:
- Սովորողների կարողությունների ու հմտությունների զարգացմանն ուղղված կլոր սեղան քննարկումներ:
- Նախապատրաստում ամառային ստուգատես - փառատոններին

2. Սպորտային

- Սպորտային միջոցառումներ, խաղեր, մրցաշարեր
- Սեղանի թենիս
- Ֆուտբոլ
- Վոլեյբոլ
- Բասկետբոլ

3. Հայրենագիտական

- Հայրենագիտական նախագծեր

- Բարձունքի հաղթահարում
- Հայրենագիտական ճամփորդություններ
- Վրանային արշավներ

4. Էկոլոգիական

- Էկոլոգիական նախագծեր
- Շրջական միջավայրի բարելավում
- Բակապուրակային աշխատանքներ

Ջոկատներ

Վաժարանում գործող ակումբները վերածվում են ջոկատների

- Անգլիախոսների 1 - Յուրա Գյանջայան
- Անգլիախոսների 2 - Շուշան Ագատյան
- Արշավականների - Ելենա Սարգսյան
- Գիտակների - Վահրամ Թոքմաջյան
- Էկոլոգների - Մարթա Ասատրյան
- Ընթերցասերի - Մարգարիտ Սարգսյան
- Հայրենագետների - Էմանուել Ազոռյան
- Հոգեբանների - Հայկուշ Գեւորգյան
- Մաթեմատիկոսներ - Արամ Մկրտչյան
- Տնտեսագետի - Արման Երանոսյան
- Վրացախոսների - Ռինա Շագինյան
- Մարզական ջոկատ - Անդրանիկ Մանուչարյան

Առավոտյան ընդհանուր պարապմունքի պատասխանատուներ

օր	պատասխանատու
02.05.14	Ճամբարի մեկնարկ. Անահիտ Բեկյան, Լիլիթ Մելքումյան
03.05.14	Մարզական պարապմունք. Նաիրա Հարությունյան եւ ընկերներ
04.05.14	Վարժարան. Լիլիթ Մելքումյան եւ ընկերներ
05.05.14	Պարային պարապմունք. Արշակ Գասպարյան եւ ընկերներ
06.05.14	Միջին դպրոց. Անահիտ Բեկյան եւ ընկերներ
09.05.14	Միջին դպրոց. Անահիտ Բեկյան եւ ընկերներ
10.05.14	Մարզական պարապմունք. Նաիրա Հարությունյան եւ ընկերներ
11.05.14	Վարժարան. Լիլիթ Մելքումյան եւ ընկերներ

12.05.14	Պարային պարապմունք. Արշակ Գասպարյան եւ ընկերներ
13.05.14	Ճամբարի փակումը Անահիտ Բեկյան, Լիլիթ Մելքումյան

Ճամբարային աշխատանքի կազմակերպման կարգը, բովանդակությունը, աշխատակարգը նախօրոք քննարկվում է և հաստատվում կրթահամալիրի մասնաժողովի կողմից:

Հայցում նշված է. « Ընդ որում մարդու օրվա ռեժիմը պիտի բաղկացած լինի գեղագիտական, ֆիզիկական և մտավոր աշխատանքներով»:

Իմ կարծիքով ճամբարի ծրագիրը կազմված էր այնպես, որ բավարարի այս պահանջներին:

Հայցում նշվում է . « Սակայն ուսումնահետազոտական ճամբարի ժամանակ սովորողները գրեթե ոչինչ չեն անում, բացի ժամանակ վատնելուց: Սովորողները դիտում են ինչ-որ ֆիլմեր, զբաղվում արհեստով և այլն: Սակայն նշված աշխատանքներն ուսումնական չեն, այսինքն իրենցով գիտելիք չեն փոխանցում սովորողներին:»

Ինչպես ճամբարի ժամանակ, այնպես էլ ամբողջ տարվա ընթացքում կան սովորողներ, ովքեր այդ ժամանակը իրենց համար արդյունավետ են անցկացնում և կան սովորողներ, ում համար քիչ օգտակար կամ անօգտակար է: Բերեմ ճամբարի երկրորդ օրվա օրակարգը.

09:00 - 09:30 Առավոտյան տոնական մարզական պարապմունք.

9:30 - 10:30 Ճամբարային ներշնչատային աշխատանքներ. Անգլիախոսների երկու ջոկատները, Էկոլոգների ջոկատ, Հայրենագետների ջոկատ, Հոգեբանի ջոկատ, Վրացախոսների ջոկատ, Մարզական ջակատ, Տնտեսագետի ջոկատ, Արշավականների ջոկատ,

Մեկօրյա ճամփորդություն Թումանյանի անվ. այգի- Գիտակների ջոկատ

Ասուլիսի նախապատրաստություն Մեդիակենտրոնում - Ընթերցասերի ջոկատ

Մաթեմատիկայի արդի խնդիրներ` Մաթեմատիկոսների ջոկատ

11:00-12:00 - Օտարալեզու ֆիլմերի դիտում, վերլուծություն, քննարկում. անգլերեն, ֆրանսերեն, գերմաներեն լեզուներով

12:00-12:30 - Ընդմիջում

12:30-14:00 - Օտարալեզու ֆիլմերի դիտում, վերլուծություն, քննարկում.

12:30-14:00 - Ֆուտբոլի, սեղանի թենիսի ժամ

14:00-15:00 - Ճամբարային նախագծեր. Նախապատրաստություն ամառային ստուգատես - փառատոներին:

Ես չգիտեմ, թե նշված աշխատանքներից որն է անիմաստ և ոչ ուսումնական: Հավանաբար, հարգելի հայցվորը ուսումնական է համարում այն աշխատանքները, երբ դասի ժամանակ ուսուցչի օգնությամբ և դասագրքի միջոցով աշխատում են: Մեջբերում անեմ Համաշխարհային բանկի թիվ. 83161-AM գեկույցից. « Նախ, կրթության որակը մնում է հիմնական մարտահրավերը, քանի որ սովորողների միջազգային գնահատումները դեռևս ցույց չեն տալիս, որ բարեփոխումների արդյունքում բարելավվել է սովորողների

առաջադիմությունը: Մաթեմատիկայի եւ բնագիտական առարակների կրթության միջազգային հետազոտությունների կենտրոնի (անգլ. TIMSS) վերջին տվյալներով 4-րդ եւ 8-րդ դասարանների սովորողների առաջադիմությունը 2003 եւ 2007 թվականների ցուցանիշների համեմատ չի բարելավվել: Ավելին, համեմատելով 2003 եւ 2011 թվականների համապատասխան տվյալները, տեսնում ենք, որ 4-րդ դասարանի սովորողների մաթեմատիկայի գնահատականներում նշանակալի ոչ մի փոփոխություն չի եղել, իսկ 8-րդ դասարանի սովորողների դեպքում անգամ զգալի անկում է գրանցվել (-12 միավոր): 4-րդ դասարանի սովորողների շրջանում բնագիտական առարկաների գնահատականներում եղել է անկում (-20 միավոր), 8-րդ դասարանի սովորողների անկումը եղել է ավելին (-24 միավոր): 2007 եւ 2011 թվականների ցուցանիշների տարբերություններն ավելի մեծ են. բոլոր չորս առարկաներից գրանցված հետընթացի միջինացված ցուցանիշը կազմել է 50 միավոր:»

Այս մրցույթներին կրթահամալիրի սովորողները չեն մասնակցել, այսինքն, դրանք անց են կացվել այն դպրոցներում, որտեղ ճամբարներ չկան: Նմանատիպ տվյալներ կարելի է վերցնել նաև ԳԹԿ-ի կայքում տեղադրված ուսումնասիրությունների արդյունքներից: Հետևաբար, ուսուցման կազմակերպման նման ձևն իրեն սպառել է:

Սովորողների համար շրջակա միջավայր խնամքին մասնակցելը ուսումնական աշխատանք է. «Սովորողը սահմանված կարգով մասնակցում է շրջապատի կամ նյութական միջավայրի բարելավմանն ուղղված նախագծերի իրականացմանը:» (ուսումնական պլանի պարզաբանումներ): Ներկայացնում եմ ճամբարի չորրորդ օրվա մասին հոգեբանի ակումբի սովորողների կարծիքը. «Շրջակա միջավայրի պահպանման միջազգային օր... Կրթահամալիրում կազմակերպված ակցիա... Բազմաթիվ սովորողներ..Բազմաթիվ կամավորներ...Ու շա՛տ-շա՛տ աղբ:

Հոգեբանի ակումբը նույնպես միացավ այս ակցիային և համառ ուշադրությամբ գննեց ու մաքրեց Մայր դպրոցից դեպի Նոր դպրոց տանող ճանապարհը: MSKH գլխարկները գլխներին, ձեռնոցներն ու տոպրակներն ձեռքներին, էներգիան կենտրոնացրած ու տեսողությունը սրած վերցնում էինք, մաքրում, փրկում, գեղեցկացնում մեր շրջակա միջավայրը: Աղբն այնքան շատ էր, իսկ մեր ձեռքի տակ եղած տոպրակները քիչ, որ ստիպված դեն նետած արկղերի մեջ էինք գետեղում թափոնները, մինչև մեզ տոպրակները հասնեին: Արդյունքում հավաքել էինք այն, ինչ չէինք կարծում կգտնենք՝ հեծանիվի ոտնակից մինչև ավտոմեքենայի ջարդած հայելի, ակնոցներից մինչև կենցաղային ապրանքներ: Եվ մեր այդքան ժրջան աշխատանքից հետո զարմանալի չէր, որ մենք 24 տոպրակ աղբ հավաքեցինք:

Դե ինչ, իսկ այս ամենը ավելի լավ պատկերացնելու համար դիտեք մեր տեսանյութը:

Հ.Գ. Շնորհակալություն ենք ուզում հայտնել մեզ օգնած բոլոր անձանց՝ մեզ միացած երկու կամավոր տղաներին, ինչպես նաև այն տղաներին, ովքեր օգնեցին հավաքված աղբը տեղափոխել հատկացված վայրը:»

Ես համաձայն չեմ հայցվորի հետ, որ պետք է ճամբարային գործունեությունը հանել ուսումնական պլաններից: Ճիշտ է, որ պետք է այնպես անել, որ հնարավորին չափ շատ սովորողների համար դրանք արդյունավետ անցնեն:

«Մխիթար Սեբաստացի» կրթահամալիրի ավագ դպրոց վարժարանի

ղեկավար Գևորգ Հակոբյան